վնաս են. վտանգաւոր են միայն կիսայիմաստները և կիսաիմաստունները (իմաստակները):

Մեծամեծ մարդիկը միշտ կապուած են լինում իւրեանց դարի հետ ընդհանուրի թուլութեամբ:

Մեր կրքերը նման են փիւնիկներին. հաղիւ թէ այրուել էր հինը՝ որ ահա մոխրի տակից ծլում է նորը. խոստովանութիւնը այրում կրճատում է մեր կիրքը:

Ոչ մի բանի մէջ չափաւորութիւն այնքան ցանկալի չէ՝ որքան անկեղծութեան և լրութեան մէջ նոցա հետ, որոնց մեք սիրում ենք:

Անչափութեան գաղափարը կարելի է անուանել բնածին զգացում. բանականութիւնը և երևակայութիւնը հաղիւ հասանում են նորան, բայց սրտին նա յայտնի է. նորանում է ցանկութեանց յուսոյ և սիրոյ անչափութիւնը:

Սիրեցեալ և սիրող մարդու մէջ եղած զանազանութիւնն այն է՝ որ մէկը կնոջ համար թողնում է իւր կեանքը, իսկ միւսը իւրը նորան է տալիս:

Մեք հաճութեամբ դարձուցանում ենք մեր հայեացքը դէպ ի ապագան. այդ նորա համար է՝ որ մենք սիրում ենք նկատել մեր ցանկացածը նորա մութ պատկերներում:

Ն. Կ.

յԱֆորիզմներից

ԵՐԿՈՒ ԱՂԱՒՆԻ

Երկու աղաւնի կապրէին սիրով.
Բայց մէկուն սիրտը տան նեղանալով,
Խելքին փչեց որ հեռու երկիրներ
Յանկարծ ձեռք զարնէ ճանապարհորդել.
Միւսն ասաց իրեն. «Ի՞նչ կուզես ընել,
Մի՞թէ եղբօրդ կուզես անջատուիլ.
Ձեզ զիտեր չարեաց վատն ու մեծագոյն
Համարուած է դառն բացակայութիւն.
Մի՛ ըներ, անդութ, և լաւ մը խորհէ
Ո՛ամբու հոգ՝ վաստակ,
Նեղութիւն, վտանգ,
Եւ փոքր ինչ եռանդդ չափաւորէ:
Ի՞նչ կլինես թէ որ այս վատ եղանակ
Յանկարծ երկարի.
Ինչո՞ւ կշտապես, զիփիւռն անուշակ
Կուզայ կհասնի:

Դեռ նոր ադաւը թռչնակաց գլխին վտանգ կսպառնար.
Պիտի մնաձեմ քեզ ես չհատնու մէկ չար պատահար.
Այնչափ բազէներ՝ որոգայթներ կան.
Անձրև որ եկաւ պիտի ափսոսամ
Խորհելով ընկերս ունի՞ ուղածը՝
Տաք տուն և տաք տեղ և այլ մնացածը։
Այս խօսքերը շարժեցին
Սիրան անխոհեմ ճամբորդին.
Բայց ճանրի սէրը և բարքն անհանդարտ
Յաղթանակեցին. «մի՛ լար, ըսաւ, արդ,
Երեք օր չանցնիր հոգիս կշտացած,
Պղառնամ պատմել քեզ գլխէս անցածն,
Սիրտդ կբացուի. ով բան չէ տեսած՝
Պատմելու բան ալ չունի անկասկած.
Իմ ճանապարհի անցից պատմութիւն
Թեզ կպատճառէ անչափ զուարճութիւն։
Պատմեմ քեզի. «այս ինչ տեղ գնացի, այս ինչ բան անցաւ,
Դու ես գնացածի պէս անձամբ այնտեղ կլինիս, իրաւ։»
Այս խօսքերով իրարու «մնաս բարեաւն» ասացին.
Ճանապարհորդն մեկնեցաւ. յանկարծ ամպերն գոռացին
Եւ ապաստան փնտռելու տեղ մը զինքը վարեցին։
Օտար մի գտաւ ապաւէն, բայց փոթորիկն ահագին
Ընայելով տերևոց՝ լաւ մը թրջեց աղաւնին.
Երբոր օդը պարզեցաւ, ճամբայ ելաւ ցրտահար
Անձրևաբեկ մարմինը չորցնելու ջանք կուտար.
Յանկարծ դաշտին մէկ կողմը տեսաւ սփռած կայ ցորեան
Թոմն ալ կեցած աղաւնի բոլորովին իւր նման.
Սիրտը ուզեց՝ մօտ թռաւ, բայց ի՞նչ ընես, ընկաւ ցանց
Օրոր ցորենի վրայ խարդախ հաւորսք էին փակցուցած։
Ցանցը մաշուած լինելով՝ ոտով, թևով ու կտցով
Պարոցաւ ղայն քակել, ազատուեցաւ մէկ կերպով.
Բայց հոն կորսնցուց քանի մի փետուր,
Եւ իւր վատ բաղդէն անզգին մաղիլ սուր
Յանկարծ երևցաւ թշուառի աչքին,
Որ թեն ու կտոր իւր ընկած վարմին
Թաշկռտելով կտանէր՝
Փախստականի կնմանէր.

Ընդդը շուտ դայն կ՚քակէր, եթէ ամպերէն յանկարծ
Ձարանար արծիւ մը՝ իւր թևերը տարածած.
Գողերուն այս բախումը յօդոտ դարձուց աղաւնին
Թռաւ գնաց դաղրեցաւ աւերակի մը մօտին,
Եւ կարծեց թէ այլ վշտաց
Վերջ կունէ այս դիպուած։
Ձարաձմի մէկ տղայ (այս հասակը դութ չունի)
Ձգեց յանկարծ պարսաքարն ու մեր խեղճուկ աղաւնի
Մէկ հարուածով կիսամահ՝
Թևաքաշ ու կաղ ի կաղ
Ընթնելով հետաքրքիր իւր բնութիւն՝
Թռիչն ուղղակի դարձուց նորէն դէպ ի տուն.
Հասաւ տեղը լաւ ու վատ.
Այլ մեծ փորձանքէ ազատ։

Երդ մէկզմէկ դտած են և քեղ դատել կ՚թողում
Ո՞անի՞ հրճուանք ըրին իւրեանց վշտաց հատուցում.
Իմ՝ սիրելի՛ բարեկամք, աշխարհ քալել թէ ցանկաք,
Թող այն լինի ձեր երկրին կամ հայրենեաց մերձակայք.
Դուք իրարու նկատմամբ պէտք է լինիք անդադար
Միշտ ղեղանի, բազմազուարճ, նորապայծառ մէկ աշխարհ։

Ցառակաց Լա Ֆոնթէն Գաղղիացւոյ

Թարգմանեաց

ՀԱՅԿՈՐԴԻ.

ԱԶԳԱՅԻՆ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ.

Պալկանթայէն ստացեալ դրութիւններ կ՚հաղորդեն, զի ի 7—19 անցեալ Հոկտեմբեր ամսոյ՝ Գեր. Գրիգորիս Երքեպիսկոպոս Առաջնորդ Թեմին Հայոց Նորոտուղայու և Հնդկաստանի և Ն. Նուիրակն Յարութիւն - Էֆէնտի շոգենաւով մեկնած է Պալկանթայէն ի Սինկափոր՝ ի Ընթաւիա և ի Պինանդ բնակեալ Հայկազն եղբարց այցելութիւն տալով՝ զնոսա մխիթարելոյ համար։

Եթէ ծովն յաջողակ լինի և նորէ, Ընդդիական կառավարութեան իշխանութեան տիրած Ձինաստանի Հօդ-Ռօնկ կղզւոյն ևս Նորին Գերապատուութիւն պիտի այցելէ, ուր մի քանի Հայ վաճառականք կգտնուին եղել։